Մամլոյ Յաղորդագրութիւն

Սոյն թուականի Ապրիլի 24-ին Գերմանահայ Կենտրոնական Խորհրդի (ԳԿԽ) եւ Առաջնորդարանի նախաձեռնութեամբ Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի Սուրբ Պողոսի(Փաուլս) եկեղեցում տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 99-րդ տարելիցի ոգեկոչման արարողութիւն: Ոգեկոչման արարողութեանը ներկայ էին Գերմանիայում ՀՀ դեսպան Վահան Յովհաննէսեանը, Հեսսենում հաւատարմագրուած դիւանագէտներ եւ ՀՀ պատուաւոր հիւպատոսներ, Բունդեսթագի և Լանդթագի պատգամաւորներ, միջ-եկեղեցական ներկայացուցիչներ, գերմանացի մտաւորականներ եւ շուրջ 700 հայեր՝ ժամանած Գերմանիայի տարբեր վայրերից:

Կենտրոնական Ձեռնարկի բացումը կատարեց ԳԿԽ-ի փոխատենապետ Մադլէն Վարդեանը: Որից յետոյ խօսքով հանդէս եկաւ Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի ատենապէտ Նազարեթ Աղեկեանը: Աղեկեանն իր խօսքում նշեց թէ՝ «երբ կը խօսինք Ցեղասպանութեան մասին, նկատի չենք ունենար միան մէկ ու կէս միլիոն հայերու ջարդը եւ բազմահազար ուրիշներու բռնի տեղահանումը,այլ մեր մտքերուն մէջ բիւրեղացած է,թէ մեր դատը արդար հատուցումի հարց է, հատուցում կորսուած կեանքերու եւ ստացուածքներու դիմաց»: Ողջոյնի խօսք արտասանեց Գերմանիայում ՀՀ դեսպան պրն. Վահան Յովհաննէսեանը մասնաւորապէս նշելով, որ չխաբուենք որոշ թուրք առաջնորդների ցաւակցութիւններից ու յիշենք որ զոհի ազգականներին պարզ ցաւակցութիւնը ոճրագործին չի ազատում քրէական պատասխանատուութիւնից, մանաւանդ երբ նա շարունակում է լիարժէք կերպով օգտուել իր յանցագործութեան արդիւնքում ձեռք բերուած առաւելութիւններից: Ելոյթներ ունեցան նաև Բունդեսթագի պատգամաւոր Տիթմար Նիթանը, Բոխումի համալսարանից դոկտոր Քրիսթին Փլաթը, Գերմանիոյ Ասորիների Միութեան նախագահ՝ Դանիէլ Դեմիրը:

Ձեռնարկի ընթացքում երաժշտական կատարումներով հանդէս եկաւ Գեղարդ Վանքի երգչախումբը, որն այս օրերին համերգներով հանդէս է գալիս Գերմանիայի տարբեր շրջաններում: Կենտրոնական Ձեռնարկը եզրափակուեց Թեմի Փոխառաջնորդ Սերովբէ վարդապետ Իսախանեանի յիշատակի խօսքով եւ Հոգեհանգստեան աղօթքով:

Vorsitzender	**Bankverbindung**	**Stellvertretende Vorsitzende**	Madlen Vartian
Dr. Nazareth Agheguian	Sparkasse Leverkusen	**Kassenwart**	Samwel Lulukyan
Tel: +49 (0) 1747886114	IBAN: DE12375514400118365543	**Schriftführerin**	Tamar Hamouchian
Nazareth.Agheguian@t-online.de	BIC: WELADEDLLEV	**Jugendbeauftragte**	Vehanoush Davoodian

Նոյն առիթով Գերմանիոյ Դաշնութեան Շտուտգարտ, Բոխում, Համբուրգ, Մյունխեն,Բեռլին քաղաքներում եւ արուարձաններում տեղի ունեցան նմանօրինակ միջոցառումներ որտեղ Գերմանիոյ Հայ համայնքի ներկայացուցիչների ներկայութեամբ և մասնակցութեամբ նշուեց Եղեռնի 99 ամեակը և կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն:

ԳԿԽ-ի Վարչութիւն

Ֆրանկֆուրտ 01.05.2014

Vorsitzender	**Bankverbindung**	**Stellvertretende Vorsitzende**	Madlen Vartian
Dr. Nazareth Agheguian	Sparkasse Leverkusen	**Kassenwart**	Samwel Lulukyan
Tel: +49 (0) 1747886114	IBAN: DE12375514400118365543	**Schriftführerin**	Tamar Hamouchian
Nazareth.Agheguian@t-online.de	BIC: WELADEDLLEV	**Jugendbeauftragte**	Vehanoush Davoodian